ՀԱՍՏԱՏՈՒՄԵՄ` ___________________

ՇՊՀ-ԻՌԵԿՏՈՐ Ե.ՍԵՐՈԲՅԱՆ

<< _____ >> _____________ 2022թ.

# Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան հիմնադրամի ավագ դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների պլան

## Ներածություն

«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ավագ դպրոցը գործում է 2017 թվականի սեպտեմբերի 1-ից ք.Գյումրի, Թումանյան 85 հասցեում: Ձևավորվել է նախկին ԳՊՄԻ-ի մշակույթի վարժարանի, ԳՊՄԻ ավագ դպրոցի և ՀՀ կառավարության 17.08.2017 թ.989-Ն որոշմամբ լուծարված նախկին ՀՀԿԳՆ «Գյումրու N3 ավագ դպրոց» ՊՈԱԿ աշակերտական և ուսուցչական

համակազմերի միատեղման արդյունքում՝ որպես Շիրակի պետական համալսարանի ավագ դպրոց:
Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխանող ավագ դպրոցն ունի 19 դասասենյակ, բնագիտական 3 լաբորատորիաներ, համակարգչային 2 լսարաններ, կահավորված գերմաներենի կաբինետ-լսարան, ՆԶՊ-ի կաբինետ-լսարան, զենքի պահեստ, մեկ գրապահոց, ուսուցիչների աշխատանքային խորհրդակցությունների սենյակ, բուժսպասարկման կենտրոն, բուֆետ-ճաշարան, ներառական կրթության սենյակ, չորս առանձնասենյակ:
2021-2022 ուսումնական տարում 12-րդ դասարանն ավարտել են 60, Շրջանավարտներից 14-ը ընդունվել են ՇՊՀ-ի համալսարան, ԵՊԲՀ `-5,ԵՊՀ՝ -5 ՀՊՏՀ`-5,հայ- ռուսական սլավոնական համալսարան`- 1 ,Վալերի Բրյուսովի անվան օտար լեզուների համալսարան՝ -1 շրջանավարտներ:
Դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի 2-րդ կարգի դիպլոմով պարգևատրվել է 1 աշակերտ, գովասանագրերով՝ 2-ը:
2021-2022 ուսումնական տարում 10-12-րդ դասարաններում ուսման առաջադիմությունը կազմել է 100 , որակական առաջադիմությունը՝ (9-10) 15:
2021-2022 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքները գնահատվել են բավարար:
**Կրթական ոլորտում իրականացվել են հետևյալ բարեփոխությունները՝**
**1.**դասապրոցեսում համադրվել են ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները՝ արդի տեխնոլոգիաներով.
**2.** ուսուցիչ-աշակերտ կրթական և մասնագիտական նշաձողը ունեցել է բարձրացման միտում.
**3.**կապված աշխատաշուկայի արդիական պահանջներին ու առաջարկություններին՝ աշակերտների մասնագիտական կողմնորոշումը օրեցօր կանոնակարգվել է , դարձել լուրջ որոշում.
**4.**տնտեսագիտական ենթահոսքի 10-րդ դասարանում իրականացվել է Ձեռնարկատիրություն առարկայի ուսուցումը.
**5.**բարձրացել է աշակերտական համակազմի համընդհանուր մակարդակը.
**6.**դաստիարակչական աշխատանքները նպատակաուղղվել են ազգային արժեքներ կրող, կիրթ, հայերենին տիրապետող և հայերեն մտածող քաղաքացիներ դաստիարակելուն.
**7.**ուսուցիչները փորձեցին ճանաչել իրենց աշակերտներին՝ որպես սովորողի և արդի ուսուցման անկյունաքարի.
**8.**դպրոցի աշխատակազմը նպաստել է կրթական գործընթացի առաջխաղացմանը, կրթական միջավայրի կայունացմանը:
**ՇՊՀ-ի ավագ դպրոցի հիմնախնդիրները, կապված կրթական լուրջ բարեփոխումներին, առկա են.**
**1.** 10-րդ դասարանում ուսումնառության բեռնաթափում չի եղել.
**2.**հիմնական դպրոցի որոշ ծրագրեր դեռևս շարունակվում են ավագ դպրոցում.
**3.**աշակերտների դասացուցակի ծանրաբեռնվածությունը, դասագրքերի բեռնաթափման մշակույթը, ուսուցիչների վերապատրաստումները, ուսուցչի դերակատարության բարձրացումը որակական իմաստով նույնպես կանոնակարգված չեն:

**2022 - 2023 ուսումնական տարում ՇՊՀ-ի ավագ դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընթացող և իրականացվող անհրաժեշտ փոփոխություններն են՝**

- կրթության որակի և արդիականության սերտ կապ.
- կրթության մատչելիություն և հասանելիություն, ստեղծել հավասար հնարավորություններ դպրոցի բոլոր աշակերտների համար.
- կրթությունը՝ որպես իրավունք.

- աշակերտների քաղաքացիական գիտակցության ձևավորումը.
- դպրոցի աշակերտակենտրոն լինելը.
- վերարժևորել ավագ դպրոցի դերը՝ խթանելով քննական մտածողությունը. նորարարությունը և վերլուծական հմտությունները.
- ունենալ շահադրդված (մոտիվացված) անձնակազմ, որը բացի համապատասխան գիտելիքներ ու հմտություններ ունենալուց, նաև կզարգացնի առաջնորդության որակի հմտություններ: Ամբողջ աշխատակազմը՝ տնօրեն, փոխտնօրեն, ուսուցիչ, պետք է կերտեն ուսումնական նոր ուղիներ՝ առաջնորդեն ուսումնառության գործընթացը, բացահայտեն մեր շուրջը կառուցվող նոր աշխարհը.

**Որպես առաջնայնութուն՝**

- Հասնել նրան, որ դպրոցն ավարտելիս աշակերտը առնվազն երկու օտար լեզու իմանա(ֆրանսերեն, գերմաներեն).
- մտավոր դաստիարակությունը դարձնել որակի բարելավման հիմնադրույթ, բացահայտել յուրաքանչյուր առարկայի ներուժը՝ բարձրացնելով ուսուցման որակը և արդյունավետությունը.
- զարգացնել աշակերտների մոտ պարադոքսալ մտածողություն.
- ավագ դպրոցում փոխշաղկապել մասնագիտական կրթության և աշխատաշուկայի միջև արդյունավետ կապը.
- հանրակրթականդպրոցն ավարտող աշակերտը լինի մտածող, վերլուծող, ազատ քաղաքացի.
- ավարտական 12-րդ դասարանների աշակերտներին նախապատրաստել միասնական քննություններին.
- դպրոցի աշակերտներին մասնակից դարձնել նոր կրթամշակութային ծրագրերին՝

ա) յուրաքանչյուր աշակերտի համար 3 անվճար այց ապահովելով որևէ մշակութային հաստատություն.

- անաղարտ պահել հայերենը. այն պիտի դառնա 21-րդ դարի լեզու.

*Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ավագ դպրոցի աշխատակազմը՝ ըստ պաշտոնների նկարագրի*

*2022-2023 ուսումնական տարի*

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Դարբինյան | Կարեն | Սիմոնի | Տնօրեն |
| 2. | Մուրադյան | Ինեսսա | Սամվելի | ՈւԱ գծով տնօրենի տեղակալ |
| 3. | Չավուշյան | Արթուր | Աշոտի | ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ |
| 4. | Բեգլարյան | Գոհար | Վիկտորի | Հայոց լեզվի և գրակ. ուսուցչուհի |
| 5. | Լուլիկյան | Կարինե | Ավետիքի | Հայոց լեզվի և գրակ. ուսուցչուհի |
| 6. | Հակոբյան | Աստղիկ | Ալեքսանի | Հայոց լեզվի և գրակ. ուսուցչուհի |
| 7. | Սարգսյան | Նունե | Զավենի | Հայոց լեզվի և գրակ. ուսուցչուհի |
| 8. | Վարդանյան | Մարիամ | Արտաշեսի | Հայոց լեզվի և գրակ. ուսուցչուհի |
| 9. | Մանուկյան | Լաուրա | Վահրիճի | Հայոց լեզվի և գրակ. ուսուցչուհի |
| 10. | Գրիգորյան | Արմենուհի | Զաուրի | Ռուսաց լեզվի ուսուցչուհի |
| 11. | Գաբրիելյան | Բելա | Ռուբիկի | Ռուսաց լեզվի ուսուցչուհի |
| 12. | Վարդանյան | Նունե | Կոլյայի | Անգլերենի ուսուցչուհի |
| 13. | Սարգսյան | Արփինե | Հենրիկի | Անգլերենի ուսուցչուհի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 14. | Աբրահամյան | Նարինե | Հակոբի | Անգլերենի ուսուցչուհի |
| 15. | Մկրտչյան | Կարինե | Արշակի | Անգլերենի ուսուցչուհի |
| 16. | Միքայելյան | Ասյա | Հրաչյայի | Անգլերենի ուսուցչուհի |
| 17. | Իկիլիկյան | Լուսինե | Վիգենի | Գերմաներանի ուսուցչուհի |
| 18. | Խաչատրյան | Նաիրա | Գեղամի | Գերմաներանի ուսուցչուհի |
| 19. | Մխիթարյան | Անահիտ | Հարությունի | Ֆրանսերենի ուսուցչուհի |
| 20. | Սուլթանյան | Աստղիկ | Արշավիրի | Մաթեմատիկայի ուսուցչուհի |
| 21. | Հարությունյան | Սաթենիկ | Վարդանի | Մաթեմատիկայի ուսուցչուհի |
| 22. | Խաչատրյան | Մելինե | Վարդանի | Մաթեմատիկայի ուսուցչուհի |
| 23. | Պետրոսյան | Գոհար | Ռոբերտի | Քիմիայի ուսուցչուհի |
| 24. | Մարտիրոսյան | Գեղանի | Գևորգի | Քիմիայի ուսուցչուհի/լաբ/ |
| 25. | Իկիլիկյան | Անահիտ | Լեմվելի | Կենսաբանության ուսուցչուհի |
| 26. | Եղիազարյան | Նարինե | Հենրիկի | Կենսաբանության ուսուցչուհի |
| 27. | Կարապետյան | Լիլիթ | Գևորգի | Հասարակագիտություն |
| 28. | Նահապետյան | Անի | Վանյայի | Պատմության ուսուցչուհի |
| 29. | Խաչատրյան | Լաուրա | Սերյոժայի | Պատմության ուսուցչուհի |
| 30. | Մելքոնյան | Արմեն | Գրիգորի | Պատմության ուսուցիչ |
| 31. | Մանվելյան | Անի | Պարգևի | Ֆիզիկայի ուսուցչուհի |
| 32. | Գալստյան | Ելենա | Վաղարշակի | Ֆիզիկայի ուսուցչուհի/լաբ/ |
| 33. | Հովհաննիսյան | Ալմարա | Ռազմիկի | Ինֆորմատիկայի ուսուցչուհի |
| 34. | Թառլյան | Լարիսա | Արմենի | Ֆիզկուլտուրայի ուսուցիչ |
| 35. | Հովհաննիսյան | Լիլիթ | Գոռի | Աշխարհագրություն |
| 36. | Հովհաննիսյան | Հարություն | Թոռնիկի | Զինղեկ/Քաղ.պաշտպ.շտաբի պետ/ |
| 37. | Իգիթյան | Արմինե | Գագիկի | Գրադարանավարուհի |
| 38. | Բաղդասարյան | Մարինե | Մովսեսի | Գրադարանավարուհի |
| 39. | Ազոյան | Արմենուհի | Արտուշի | Գործավարուհի |
| 40. | Օվյան | Էդիկ | Զավենի | Տնտեսվար |
| 41. | Քոչարյան | Կարինե | Երվանդի | Հավաքարար |
| 42. | Խաչատրյան | Սահանուշ | Կարապետի | Հավաքարար |
| 43. | Հովհաննիսյան | Հայկանուշ | Եղիազարի | Հավաքարար |
| 44. | Հովհաննիսյան | Գոռ | Մեսրոպի | Բանվոր |
| 45. | Սարգսյան | Գոհար | Վոլոդյայի | օպերատոր |

Ընդամենը 45 աշխ.
Ուսուցիչներ-30
Վարչական-3
Ուսումնաօժ.-12

*«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ավագ դպրոցի աշակերտական համակազմը՝  ըստ դասարանների, հոսքերի, ենթահոսքերի*
*2022-2023 ուսումնական տարի*

1. Յում. $\text{X}^{ա}$ դաս.- 23 աշ.
2. Յում. $\text{X}^{բ}$ դաս.- 22 աշ.
3. Յում. $\text{X}^{գ}$ դաս.-            21աշ
4. Բն. X դաս.- 25 աշ.
5. Յում. $\text{XI}^{ա}$ դաս.- 23 աշ.
6. Յում. $\text{XI}^{բ}$ դաս.- 21աշ.
7. Ֆիզմաթ- 14աշ.
8. Յում. $\text{XII}^{ա}$ դաս - 30 աշ.
9. Յում. $\text{XII}^{բ}$ դաս - 26 աշ.
10. Բնագիտական XII-18աշ.

Ընդամենը -223 աշակերտ,  աղջիկ - 141, տղա - 82

*«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան»*
*հիմնադրամի ավագ դպրոցի*
*2022- 2023 ուսումնական տարվա I և II կիսամյակների*
*ուսումնական շաբաթներ*

*I կիսամյակ*

*Ուսումնական շաբաթներ 15 շաբաթ 2 օր*

*01.09 - 02.09.2022թ./ 2 օր /*

1. *05.09 - 09.09.2022թ.*
2. *12.09 - 17.09.2022թ.*
3. *19.09 - 24.09 .2022թ. / 21.09 ազատ օր,չորեքշաբթի/*
4. *26.09 - 30.09 .2022թ.*
5. *03.10 -08.10.2022թ.*
6. *10.10- 15.10.2022թ.*
7. *17.10-22.10.2022թ*

***Աշնանային արձակուրդներ*** *24.10 - 30.10.2022թ.*

8. *31.10- 04.11.2022թ.*
9. *07.11 - 11.11.2022թ.*
10. *14.11 - 18.11.2022թ.*
11. *21.11 - 25.11.2022թ.*
12. *28.11- 02.12.2022թ.*
13. *05.12- 09.12.2022թ.*
14. *12.12 -16.12.2022թ.*
15. *19.12-23.12.2022թ*

***Ձմեռային արձակուրդներ*** *26.12.2022- 08.01.2023թ.*

*II կիսամյակ*

*Ուսումնական շաբաթներ 19 շաբաթ*

*1.09.01-13.01.2023թ*
*2.16.01-20.01.2023թ*
*3.23.01-27.01.2023թ*
*4.30.01-03.02.2023թ*
*5.06.02-10.02.2023թ*
*6.13.02-17.02.2023թ*
*7.20.02-24.02.2023թ*
*8.27.02-03.03.2023թ*
*9.06.03-10.03.2023թ*
*10.13.03-17.03.2023թ*
*11.20.03-24.03.2023թ*
*Գարնանային արձակուրդներ 27.03 – 02.04.2023թ*
*12.03.04-07.04.2023թ*
*13.10.04- 14.04.2023թ*
*14. 17.04-21.04.2023թ*
*15. 25.04-28.04.2023թ*
*16. 02.05-05.05.2023թ*
*17. 08.05-12.05.2023թ*
*18. 15.05-19.05.2023թ*
*19. 22.05-26.05.2023թ*

**Ուսումնադաստիարակչական աշխատանքներ**

| **Բաժին 1. Ուսումնադաստիարակչական աշխատանքներ** | | | |
|---|---|---|---|
| N | Աշխատանքի բովանդակությունը | Ժամկետը | Կատարող անձ |
| 1. | Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հիմնարկների ,առանձին գործող ավագ դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններից ելնելով (ըստ ՀՀԿԳՄՍ նախարարի 20.07.2021թ. N 54-Ն հրամանի հավելված 1)՝ կազմել Շիրակի պետական համալսարանի ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների ուսումնական պլանները: | 24-26.2022թ. | Կ.Ղարիբյան<br>Ի.Մուրադյան |
| 2. | Ելնելով ավագ դպրոցի աշակերտական համակազմից՝ 2022-2023 ուսումնական տարում ձևավոր ել հումանիտար հոսք (10-12-րդ դասարաններ), բնագիտամաթեմատիկական հոսք (10-րդ և 12-րդ դաս.տնտեսագիտական ենթահոսք) ( կենսաքիմիայի ենթահոսք 10-րդ և 12-րդ դասարաններ), ըստ հոսքային և ընդհանուր հանրակրթական բաղադրիչների, դպրոցական բաղադրիչի բաշխման: | Մինչև 30.08.2022թ. | Կ.Ղարիբյան<br>Ի.Մուրադյան |
| 3. | 2022-2023 ուսումնական տարում տնտեսագիտական և ֆիզմաթ ենթահոսքի 10-րդ և 11-րդ դասարաններում դպրոցական բաղադրիչի հաշվին ընդգրկել <<Ձեռնարկատիրություն>> առարկան՝ աշակերտների ձեռնարկատիրական, ֆինանսական ոլորտների հմտությունները զարգացնելու նպատակով: | 30.08.2022թ. | Լ.Կարապետյան |
| 4. | Շիրակի պետական համալսարանի ավագ դպրոցում որպես օտար լեզու դիտարկել անգլերենը 57 դասաժամ, կիսվող դասաժամերով՝ գերմաներենը 20 ժամ, ֆրանսերենը 12 ժամ 9-12-րդ դասարաններում: | 2022-20203 ուստարի | Կ.Ղարիբյան<br>Ի.Մուրադյան |
| 5. | Ըստ գործող կարգի ուսումնական պարապմունքներն սկսել 2022թ. սեպտեմբերի 1-ին, ավարտել 2023թ. մայիսի 26-ին, հնգօրյա, միահերթ աշխատակարգով, արձակուրդներ՝ աշնանային 24.10.-30.10.2022թ., ձմեռային՝ 26.12.2022թ.-08.01.2023թ., գարնանային՝ 27.03-02.04.2023թ.<br>Iկիսամյակ - ուսումնական 15 շաբաթ 2 օր<br>II կիսամյակ - ուսումնական 19 շաբաթ | 2022-2023 ուստարի | Մանկավարժական խորհուրդ |
| 6. | Գործածել գնահատման 10 միավորային սանդղակ, ընթացիկ գնահատման մեջ կարող է կիրառվել գնահատման այլ սանդղակ, այն բերել 10 միավորային գրանցման.պետական ավարտական քննությունների ժամանակ կիրառվող գնահատման սանդղակները բերել 10 կամ 20 միավորային գրանցման: | 2022-2023 ուստարի | Դասավանդող ուսուցիչ |

| | | | |
|---|---|---|---|
| 7. | 8-11-րդ դասարաններում ՀՀԿԳ նախարարության կողմից երաշխավորված ծրագրի և ուսումնական նյութերի հիման վրա դասավանդել «Առողջ ապրելակերպ» դասընթացը՝ յուրաքանչյուր դասարանին տրամադրելով 14 դասաժամ: Ֆիզկուլտուրայի ժամերի հաշվին 2023 թ.հունվար-փետրվար ամիսներին ընթացիկ գնահատում չկատարել, դասընթացի գրանցումները կատարել էլեկտրոնային դասամատյանի ֆիզկուլտուրա առարկայի էջում: | 2022-2023 ուստարի | Ֆիզկուլտուրայի ուսուցիչ |
| 8. | 8-12-րդ դասարաններում «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Ինֆորմատիկա», «Քիմիա», «Ֆիզիկա», «Կենսաբանություն», «Հայոց պատմություն» և այլ առարկաների ծրագրով ամսական առնվազն 1(մեկ) ժամ ուսուցումը կազմակերպել համակարգչային կաբինետում՝ելնելով յուրաքանչյուր առարկայի մատուցվող ուսումնական նյութի բովանդակային և դասավանդման մեթոդական պահանջներից:Անհրաժեշտ է օգտագործել ՀՀԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի կայքում(htp://www.aniedu.am) կրթության ազգային ինստիտուտի կրթական ալիքից(https://www.youtube.com/user/Ruzanico), htp://informatika.am/կայքից և «Հայկական կրթական միջավայրի պաշարների շտեմարանում» (htp://ib.armedu.am) տեղադրված էլեկտրոնային ուսումնական նյութերը: | 2022-2023 ուստարի | Դասավանդող ուսուցիչներ |
| 9. | Դպրոցում հատուկ բժշկական խմբում ընդգրկված աշակերտների ֆիզկուլտուրայի ուսուցումը կազմակերպել այդ առարկայի 10-12-րդ դասարանների ծրագրով, անհատական ծրագրով, գնահատում չկատարել: | 2022-2023 ուստարի | Ֆիզկուլտուրայի ուսուցիչներ |
| 10. | 12-րդ դասարանների ուսումնական գործընթացը կազմակերպել համաձայն հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների 2022-2023 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների՝ըստ ՀՀԿԳՄՍ նախարարի 20.07.2021թ. N 54-Ն հրամանի Հավելված 1-ի. «Կրթություն» շաբաթաթերթ. 31.07.2019 թ. 31-32(900-901), էջ 11-14: | 2022-2023 ուստարի | Տնօրինություն 12-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչներ |
| 11. | Բոլոր դասարաններում ունենալ սովորողների առաջադիմության թերթիկ, անցկացնել կիսամյակային գնահատականները, բացակայությունները: | 2022-2023 ուստարի | 10-12-րդ դասարանների դասղեկներ |

| | | | |
|---|---|---|---|
| 12. | 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում գնահատումները կատարելիս առաջնորդվել 2018-2019 ուստարում ՀՀ հանրակրթական դպրոցներում գնահատման համակարգի կիրառման վերաբերյալ համապատասխան մեթոդական ցուցումներով: | 2022-2023 ուստարի | 10-12-րդ դասարանների դասավանդող ուսուցիչներ |
| 13. | Շիրակի պետական համալսարանի հետ համատեղ կազմակերպել բազմաբնույթ ուսումնական պարապմունքներ, բաց դասեր, առարկայական օլիմպիադաներ, գիտական կոնֆերանսներ, լաբորատոր աշխատանքներ դպրոց-բուհ, աշակերտ-ուսանող, դասախոս-ուսուցիչ համագործակցության շրջանակներում: | 2022-2023 ուստարի | |
| 14. | Մասնակցել ԳԹԿ-ի կողմից տրվող ընթացիկ և կիսամյակային արտաքին գնահատումներին: | 2022-2023ուստարի | Տնօրինություն |
| 15. | **Շիրակի պետական համալսարանի ավագ դպրոցում 2022-2023 ուսումնական տարում ձևավորել առարկայական 5(հինգ) մեթոդմիավորումներ.**<br>1) Հայոց լեզու և գրականություն-6 ուսուցիչ,ֆիզկուլտուրա, ՆԶՊ -2 նախագահ՝ Լ.Մանուկյան<br>2) Ռուսաց և օտար լեզուների (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն)-ռուսաց լ.-2 ուսուցիչ, անգլերեն-5 ուսուցիչ, գերմաներեն-2 ուսուցիչ, ֆրանսերեն-1 ուսուցիչ, նախագահ՝ Ն.Վարդանյան<br>3) Պատմության, հասարակագիտության(ծեռնարկա-տիրություն), հայոց եկեղեցու պատմության-3 ուսուցիչ, նախագահ՝ Լ.Խաչատրյան<br>4) Մաթեմատիկայի, ինֆորմատիկայի-մաթեմատիկա-3 ուսուցիչ, ինֆորմատիկա-1 ուսուցիչ, նախագահ՝ Ս.Հարությունյան<br>5) Բնագիտական առարկաների- ֆիզիկա-2 ուսուցիչ կենսաբանություն-2 ուսուցիչ,քիմիա-2 ուսուցիչ, աշխարհագրություն- 1 ուսուցիչ, նախագահ՝ Ն.Եղիազարյան<br>7) Կազմել առարկայական մեթոդմիավորումների նիստերի ժամանակացույց, աշխատանքային պլան-ծրագիր, առաջնորդվել ՀՀ պետական հանրակրթական հաստատության առարկայական մեթոդականմիավորման(մասնագիտական խմբի)օրինակելի կանոնադրությամբ, մատյանի լրացմանկարգով, արձանագրություններ կազմելու օրինակելի նմուշներով: | 2022-2023 ուսումնական տարի | Տնօրինություն առարկայական-մեթոդական միավորումներ |

| | | | |
|---|---|---|---|
| 16. | **Շիրակի պետական համալսարանի ավագ դպրոցում 2022-2023 ուսումնական տարում ձևավորված 10 դասարաններում դասղեկներ նշանակել ներքոհիշյալ ուսուցիչներին.**<br>Հում. Xա դասարան- Մխիթարյան Անահիտ<br>Հում. Xբ դասարան- Խաչատրյան Լաուրա<br>Հում. Xգ դասարան- Մանուկյան Լաուրա<br>Բն. X դասարան –վարդանյան Նունե<br>Հում. XIա դասարան –Իգիթյան Արմինե<br>Հում. XIբ դասարան – Եղիազարյան Նարինե<br>Ֆիզմաթ XIգ դասարան- Գալստյան Ելենա<br>Հում. XIIա դասարան- Կարապետյան Լիլիթ<br>Հում. XIIբ դասարան- Մարտիրոսյան Գեղանի<br>Բնագիտական XIIգ– Թառլյան Լարիսա<br>1) Դասարանի ղեկավարի կողմից դասարանի հետ կազմակերպել բազմակողմանի դաստիարակչական աշխատանքներ, համակարգել աշակերտների ուսումնառությանզարգացման հիմնական ուղենիշները գիտամանկավարժական տեսանկյունից:<br>2) Ապահովել դասավանդող ուսուցիչների, մյուս մանկավարժների ու աշակերտների, մանկավարժների ու ծնողների միասնականությունը, ներդասարանական, ներդպրոցական և արտադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների ներդաշնակ կապը:<br>3) Հաշվի առնել աշակերտների տարիքային, անհատական, հոգեբանական առանձնահատկությունները, դաստիարակվածության մակարդակը, նրանց կյանքի պայմանները: | 01.09.2022<br>2022-2023 ուսումնական տարի | Տնօրեն՝ Կ.Ղարիբյան<br>10-12-րդ դասարանների դասղեկներ |
| 17. | **Սերտ կապ պահպանել Շիրակի մարզային փրկարարական վարչության հետ.** ըստ համապատասխան ժամանակացույցի՝ դպրոցի աշխատակազմին և սովորողներին մանրամասնորեն տեղեկացնել դպրոցում առկա անվտանգության միջոցների տեղերին, տիրապետել դրանց օգտագործման կանոններին: | 2022-2023 ուստարի | Տնօրինություն զինղեկ, դասղեկներ |

| | | | |
|---|---|---|---|
| 18. | Դպրոցի աշխատակազմին, սովորողներին, ծնողներին իրազեկել արտակարգ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու և հնարավորինս խուսափելու բնական և տեխնածին վտանգներից: | 2022-2023 ուստարի | Տնօրինություն զինղեկ, դասղեկներ |
| 19. | Ըստ համապատասխան ժամանակացույցի՝ պարբերաբար իրականացնել քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ (սեմինար, գործնական պարապմունքներ, տարհանում): | 2022-2023 ուստարի | Տնօրինություն զինղեկ, քաղպաշտպանության շտաբի պետ |
| 20. | Պարբերաբար կազմակերպել սովորողների ֆիզիկական, հոգեկան և սոցիալական առողջությանն ուղղված միջոցառումներ՝ կապված ալկոհոլի, թմրամիջոցներիև հոգեմետ նյութերի օգտագործման կանխարգելմանը: | 2022-2023 ուստարի | Աշակերտական,ծնողական խորհուրդներ, դասղեկներ |
| 21. | Հաճախակի կազմակերպել սովորողների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց կանխարգելմանը միտվածմիջոցառումներ(սեմինարներ, տեսաֆիլմերի ցուցադրում, կլոր-սեղաններ): | 2022-2023 ուստարի | Տնօրինություն, աշակերտական. ծնողական խորհուրդներ, դասղեկներ |
| 22. | Դպրոցում կազմակերպել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման մասին սովորողների գիտելիքների բարձրացմանն ուղղված միջոցառումներ (քննարկումներ, կլոր-սեղաններ, տեսաֆիլմերի դիտում և այլն): | 2022-2023 ուստարի | Տնօրինություն, աշակերտական. ծնողական խորհուրդներ, դասղեկներ |

**Բաժին 2.**Աշխատանք մանկավարժական կադրերի հետ, նրանց որակավորման արծրացումը

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարանհիմնադրամի ավագ դպրոցի ուսուցիչների համակազմը բաղկացած է գործող 37(+4 ֆիզ.) ուսուցիչներից, 36-կին, 1- տղամարդ:<br>Տարակարգ ունեն -3 ուսուցիչներ:<br>Ասպիրանտուրական կրթություն,գիտական գործունեությամբ զբաղվում են -1 ուսուցիչներ:<br>Բոլոր ուսուցիչներն ունեն բարձրագույն մանկավարժական որակավորում: Ըստ մասնագիտությունների՝ դասավանդում են 37-ը:<br>Ուսուցիչների գերակշիռ մասն անցել է ատեստացիոն վերապատրաստումների:<br>Վերապատրաստման դասընթացներ վարող ուսուցիչների թիվը-2<br>Մասնագիտական հրապարակումներ ունեցող ուսուցիչների թիվը-1<br>Դասավանդող ուսուցիչները տիրապետում են աշակերտակենտրոն, մասնակցային, համագործակ-ցային, ինտերակտիվ մեթոդներին, տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներին, համացանցին: | 2022-2023 ուստարի | Տնօրինություն |
| 2. | Ուսուցչական համակազմի թիվ 1 հիմնախնդիրը՝ կրթության որակի բարձրացում: | 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում | Տնօրինություն, մանկավարժական խորհուրդ առարկայական մեթոդմիավորումներ |
| 3. | Յուրաքանչյուր առարկայի ուսուցիչ պարտավոր է հետևել ամեն մի աշակերտի անձնային հատկանիշներին և անհատականությանը: | | |
| 4. | 2 ուսուցչուհիմասնակցում են <<Լավագույն ուսուցիչ>> ծրագրին | | |
| 5. | Մեծացնել ուսուցչի դերակատարությունը դպրոցում, ծնողական համայնքում, հասարակությունում՝ իբրև մասնագետի և իբրև հասարակության ամենաակտիվ և նվիրյալ մտավորականի: | | |
| 6. | Ուսուցիչներին մասնակից դարձնել ՀՀԿԳՄՍ նախարարության տարակարգի գործընթացին, դպրոցականների հանրապետական օլիմպիադաների ներդպրոցականփուլի անցկացմանը: | | |
| 7. | Ուսուցչի առաքելության մեկ չափանիշը դպրոցում դարձնել ստեղծարար, անընդհատ սովորող ուսուցչի առկայությունը, որը կկարողանա նաև անընդհատ սովորելու գործընթացի մեջ ներառել նաև աշակերտին: | 2022-2023 ուստարի | |

**Բաժին 3. Մանկավարժական խորհրդի նիստեր**

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Շիրակի պետական համալսարանի ավագ դպրոցում 2022-2023 ուսումնական տարվա մանկավարժական խորհրդի առաջին նիստում կազմավորել մանկավարժական խորհուրդը՝ 37 անդամներից բաղկացած,որոնցից տնօրենը պարբերաբար մասնակցում է բուհի գիտական խորհրդիհամապատասխան նիստերին: (Կից ներկայացվում է մանկավարժական խորհրդի կազմը): | 2022-2023 ուսումնական տարի | 2022-2023 ուսումնական տարի մանկավարժական խորհուրդ |
| 2. | Մանկավարժական խորհրդի նիստերում քննարկել, ընդունել որոշումներ □Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան □հիմնադրամի ավագ դպրոցի<<Օրինակելի կանոնադրության >>համապատասխան դրույթների համաձայն: | | |
| **Բաժին 4. Աշխատանք ծնողների հետ** | | | |
| 1. | Շիրակի պետական համալսարանի ավագ դպրոցի ծնողների հետ կատարվող աշխատանքներում առաջնորդվել □Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի□, □Հայաստանի Հարապետության ընտանեկան օրենսգրքի□, □Երեխայի իրավունքների մասին□ ՀՀ օրենքի, □Հանրակրթության մասին□ ՀՀ օրենքի, համապատասխան դրույթներով: | 2022-2023 ուսումնական տարի | Տնօրինություն ծնողական խորհուրդ |
| 2. | Ըստ համապատասխան ժամանակացույցի՝ դասարանական ծնողական խորհուրդները, դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորել, դասարանական և համադպրոցական ծնողական ժողովները գումարել, քննարկումներն ու որոշումները ընդունել, աշխատանքները կազմակերպել գործող կարգի համաձայն: (Կից ներկայացվում են համապատասխան կազմերը, ժամանակացույցերը): | | |
| **Բաժին 5. Աշակերտական ինքնակառավարում** | | | |

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Շիրակի պետական համալսարանի ավագ դպրոցի աշակերտական ինքնակառավարման աշխատանքներում առաջնորդվել Հայաստանի Հանրապետության սահմանադրության, <<Երեխայի իրավունքների մասին>> ՀՀ օրենքի, <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի, ՀՀ <<Հանրակրթական ուսումնական հաստատության>> ՊՈԱԿ աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրության համապատասխան ցուցումներով, դրույթներով ՝ | 2022-2023 ուսումնական տարի | Տնօրինություն, աշակերտական խորհուրդ |
| 2. | Ըստ համապատասխան ժամանակացույցի՝ դասարանական աշակերտական խորհուրդները, դպրոցի աշակերտական խորհուրդը կազմավորել, դասարանական և համադպրոցական աշակերտական ժողովները գումարել, քննարկումներն ու որոշումները ընդունել, աշխատանքները կազմակերպել գործող կարգի համաձայն: (Կից ներկայացվում են համապատասխան կազմերը, ժամանակացույցերը): | | |
| **Բաժին 6. Ներդպրոցական գործունեության վերահսկում** | | | |
| 1. | Տեղեկատվական հիմքի ձևավորման նպատակով անձնակազմի աշխատանքը գնահատել և նրանց նպատականշել ավելի արդյունավետ աշխատանքի: Օգտագործել վարչարարական վերահսկողության հետևյալ ձևերը՝<br>1) թեմատիկ վերահսկողություն.<br>2) անհատական վերահսկողություն.<br>3) փոխադարձ վերահսկողություն.<br>4) ուսուցիչների կոլեկտիվ վերահսկողություն.<br>5) ընդհանուր վերահսկողություն: | 2022-2023 ուսումնական տարվա | Տնօրեն,ուսումնական և մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալներ |

| | | | |
|---|---|---|---|
| 2. | **Վարչական ստուգում**<br>1.Տնօրենի տեղակալների միջոցով իրականացնել վարչական անձնակազմի վերահսկողությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», օրենքների կատարումը, սանիտարահիգիենիկ պայմանների վիճակը, աշխատանքի պահպանության և նյութատեխնիկական պայմանների անվտանգության կանոնների պահպանությունը, դպրոցի շենքի և նյութատեխնիկական բազայի պահպանությունը, անհրաժեշտ փաստաթղտերիև գրագրությունների գործընթացը:<br>2.Վերահսկել տնօրենի, ուսումնական գծով և ՄԿԱԳ-ի տեղակալների միջոցով ուսումնական ծրագրերի կատարումը, դասաժամերի ճիշտ տևականությունը, աշակերտների հաճախելիությունը, առարկայական մեթոդմիավորումների, դասղեկների աշխատանքը, դպրոցական փաստաթղթերի որակը, (դասմատյան, ուսուցիչների թեմատիկ, օրվա պլաններ), առարկայական մեթոդմիավորումների աշխատանքը, դպրոցական գրադարանի աշխատանքը, դաստիարակչական գործընթացի վիճակը, սպասարկող անձնակազմի աշխատանքի որակը, դպրոցի նյութատեխնիկական բազայի վիճակը և պահպանությունը: | | |
| 3. | **Ուսումնադաստիարակչական գործընթացի ստուգում**<br>1) Թեմատիկ ընդհանրացնող ստուգում տարբեր դասարաններում տարբեր առարկաներից:<br>2) Դասարանական ընդհանրացնող ստուգում 10-րդ դասարաններում(պետական ավարտական քննություններ), 10-11-րդ դասարաններում(հոսքային առարկաներից փոխադրական քննություններ):<br>3) Առարկայական ընդհանրացնող ստուգում (որոշակի առարկայից տարբեր դասարաններում):<br>4) Անձնական ստուգում.տարբեր դասարաններում մի ուսուցչի աշխատանքի համալիր ստուգում:<br>5) Եզրափակիչ ստուգում տնօրինության կողմից. կիսամյակային ստուգողական գրավոր աշխատանքների, ստուգարքների, 10-11-րդ դասարաններում փոխադրական, 12-րդ դասարաններում պետական ավարտական քննություններ: (Կից ներկայացվում է ստուգումների փաթեթի ժամանակացույցը): | | |

| Բաժին 7. Ֆինանսատնտեսականգործունեությանևուսումնանյութականբազայի ամրապնդում | | | |
|---|---|---|---|
| | Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան հիմնադրամի ավագ դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը և նյութատեխնիկական բազայի ամրապնդումը կարգավորվում է մայր բուհի համապատասխան վարչության կողմից` գործող կարգի համաձայն: | 2022-2023 ուստարի | Շիրակի պետական համալսարան |

ՇՊՀ-ի ավագ դպրոցի տնօրենի ԺՊ` Կ.Դարբինյան